1000 խոշոր հարկատուների կողմից 2023թ. հունվար-հունիս ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի վերլուծություն

2023թ. հունվար-հունիս ամիսներին 1000 խոշորագույն հարկատուների կողմից պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր մեծությունը կազմել է մոտ 875 մլրդ դրամ, ինչը 21%-ով ավելի է նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից (գծապատկեր 1): 2023թ. մակարդակն անհամեմատ բարձր է ոչ միայն 2022թ., այլ նաև դրան նախորդող, այդ թվում՝ տնտեսական առումով առավել բարենպաստ կամ մինչճգնաժամային համարվող ժամանակահատվածի նկատմամբ:



Գծապատկեր 1. Հունվար-հունիս ամիսներին 1000 խոշորագույն հարկատուների կողմից ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր գումարը, մլրդ դրամ

2023թ. առաջին կիսամյակում, նախորդ տարիների նույն ժամանակահատվածի համեմատությամբ, էական փոփոխություններ են արձանագրվել նաև 10, 50 և 100 խոշորագույն հարկատուների կողմից պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր մեծության պարագայում: Այսպես, 2023-ի հունվար-հունիս ժամանակահատվածում 10 խոշորագույն հարկատուները պետական բյուջե են վճարել 188 մլրդ դրամ հարկ, ինչը նախորդ տարվա համեմատությամբ պակաս է 28 մլրդ դրամով (գծապատկեր 2): Այս փաստը պայմանավորված է ցանկի առաջատար ԶՄՊԿ կողմից 2022-ին աննախադեպ ծավալով հարկային պարտավորությունների կատարմամբ, որը ներառում էր ոչ միայն հաշվետու ժամանակահատվածի, այլ նաև նախորդ ժամանակահատվածներում չվճարված, վերահաշվարկված և 2022-ի առաջին կիսամյակի հաշվարկով շուրջ 105 մլրդ դրամի չափով կատարված հարկային վճարումներով:

100 խոշոր հարկատուների պարագայում 2023-ի առաջին կիսամյակում հարկային վճարումները, նախորդ տարվա համեմատությամբ ավելացել են 25 մլրդ դրամով:



Գծապատկեր 2. Հունվար-հունիս ամիսներին 10, 50 և 100 խոշորագույն հարկատուների կողմից ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր գումարը, մլրդ դրամ

2022-ի համեմատությամբ ավելի քան 40% ավելացում է արձանագրել 1000 խոշորագույն հարկատուների ցանկի վերջնամասում տեղ զբաղեցնող ընկերությունների կողմից վճարված հարկերի մեծությունը: Այսպես, ցանկի վերջին հարյուրակում գտնվող հարկատուների վճարումները 2023թ. հունվար-հունիս ամիսներին կազմել է 17,7 մլրդ դրամ՝ 2022-ի 12,6 մլրդ դրամի փոխարեն (գծապատկեր 3):



Գծապատկեր 3. 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ներառված 10, 50 և 100 փոքրագույն հարկատուների կողմից հունվար-հունիս ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր գումարը, մլրդ դրամ

1000 հարկատուների ցանկում առաջին և վերջին 100-յակի ընկերությունների կողմից պետական բյուջե վճարված հարկերի մեծության հարաբերակցությունը 2023թ. առաջին կիսամյակի համար կազմել է 28 անգամ, ինչը նախորդ տարվա

համեմատությամբ էականորեն ցածր է: Առաջին և վերջին տասնյակի հարկատուների վճարած հարկերի հարաբերակցությունը 2023-ին 110 անգամ է, ինչը ևս զգալիորեն ցածր է, քան նախորդ տարում գրանցված հարաբերակցությունը (գծապատկեր 4):



Գծապատկեր 4. 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ներառված 10, 50 և 100 խոշորագույն և փոքրագույն հարկատուների կողմից հունվար-հունիս ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր գումարի հարաբերակցությունը, անգամ

2023թ. հունվար-հունիս ամիսների արդյունքներով ՀՀ-ում գործող 162 ընկերություն վճարել է 1 մլրդ դրամից ավելի հարկեր: 2022-ին այդպիսի հարկատուների թիվը 114 էր, 2021-ին՝ 103, իսկ դրան նախորդող տարիներին՝ էլ ավելի քիչ: Նույն կերպ, 2023-ի հունվար-հունիս ամիսների արդյունքներով, 318 ընկերության և կազմակերպության հարկային վճարումների գումարը գերազանցել է 500 մլն դրամը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում այդպիսի հարկատուների թիվը 244 էր:



Գծապատկեր 5. 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ներառված հարկատուների թվաքանակը՝ ըստ հունվար-հունիս ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր գումարի մեծության

Վերջին երկու տարիների առաջին կիսամյակի արդյունքներով, խոշոր հարկատուների ցանկում ներառված չեն տնտեսվարող սուբյեկտներ, որոնց վճարած հարկերի ընդհանուր մեծությունը չի գերազանցում 100 մլն դրամը, մինչդեռ 2021-ին ցանկում ներառվել էր 60 այդպիսի հարկատու, իսկ, օրինակ, 2020թ.դրանց թիվն էլ ավելի մեծ էր. ցանկում ներառված հարկատուների 1/5-ը վճարել էր 100 մլն դրամից պակաս հարկեր (գծ. 5): Ավելին, 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ներառվելու համար 2023թ. առաջին կիսամյակում պետք էր վճարել շուրջ 170 մլն դրամ, այն դեպքում, երբ 2022-ին ցանկում ներառվելու համար բավարար կլիներ 120 մլն դրամը, իսկ 2021-ին՝ 95 մլն դրամի չափով հարկային պարտավորությունների կատարումը:

2023-ի հունվար-հունիս ամիսների արդյունքներով, ՀՀ-ում 276 ընկերության պարագայում շահութահարկի վճարումը գերազանցել է 100 մլն դրամը, նախորդ տարի այդպիսի ընկերությունների թիվը 220 էր, իսկ օրինակ 2018-ին՝ 133: Նույն կերպ, 277 հարկատուի վճարած եկամտային հարկի մեծությունը գերազանցել է 100 մլն դրամը, նախորդ տարվա համեմատությամբ այսպիսի հարկատուների թվքանակը ավելացել է 17-ով (գծապատկեր 6):



Գծապատկեր 6. 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ընդգրկված ընկերությունների թիվն ըստ հունվար-հունիս ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված շահութահարկի և եկամտային հարկի մեծության

Մեկ այլ կարևոր միտում է 1000 հարկատուների ցանկում ընդգրկված ընկերությունների կողմից ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր մեծության կառուցվածքում ուղղակի հարկերի (շահութահարկ և եկամտային հարկ)

տեսակարար կշռի աճը: 2023թ. առաջին կիսամյակում 1000 հարկատուների վճարած հարկերի ընդհանուր մեծության 38,9%-ը կազմել են ուղղակի հարկերը: Նախորդ տարի այս ցուցանիշը 40.4% էր (գծապատկեր 7):

1000 հարկատուների ցանկի առաջին 100 ընկերությունների հարկային վճարումների ընդհանուր մեծության 40%-ը ուղղակի հարկերն են ինչը զգալիորեն բարձր է նախորդ մի քանի տարիների մակարդակից և գրեթե կրկնում է 2019թ. արդյունքը: 1000 հարկատուների պարագայում նույն ցուցանիշը 2023-ին 38% է, ինչը էապես բարձր է նախորդ տարիների մակարդակից:



Գծապատկեր 7. 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ընդգրկված ընկերությունների կողմից հունվար-հունիս ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված ուղղակի հարկերի տեսակարար կշիռը վճարված հարկերի ընդհանուր մեծության կառուցվածքում, %

2023թ. առաջին վեց ամիսների արդյունքներով, 122 հարկատուի ուղղակի հարկի վճարումները գերազանցել են 500 մլն դրամը: Նախորդ տարի այդպիսի կազմակերպությունների թիվը 89 էր, իսկ 2021-ին՝ 67:

2023թ. հաշվետու ժամանակահատվածում 100 մլն դրամը գերազանցող չափով ուղղակի հարկեր են վճարել 490 ընկերություններ, 2022-ին հանրապետությունում գործել է 446 այդպիսի կազմակերպություն (գծապատկեր 8):



Գծապատկեր 8. 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ընդգրկված ընկերությունների թիվն ըստ հունվար-հունիս ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված ուղղակի հարկերի մեծության

Այսպիսով, 2023թ. հունվար-հունիս ժամանակահատվածում 1000 հարկատուների ցանկի առաջին հարյուրակում տեղ զբաղեցրած միջին վիճակագրական ընկերության՝ ՀՀ պետական բյուջե կատարված հարկային վճարումների կազմն ու կառուցվածը որոշակիորեն տարբերվում է նախորդ տարիների պատկերից (աղյուսակ 1):

Աղյուսակ 1. Ցանկի առաջին հարյուրյակի միջին վիճակագրական հարկատուի վճարած հարկերը

	2018	2019	2020	2021	2022	2023
Ընդամենը, մլրդ դրամ	2.8	3.1	3.0	3.1	4.5	4.9
Շահութահարկ, մլն դրամ	597	691	521	502	845	1240
Եկամտային հարկ, մլն դրամ	406	528	525	525	563	714
ԱԱՀ, մլրդ դրամ	1.07	1.22	1.21	1.27	1.49	1.82
Ակցիզային հարկ, մլն դրամ	765	373	413	292	346	450

Առաջին 100-յակի միջին վիճակագրական հարկատուն 2023-ի առաջին կիսամսյակում վճարել է 4,9 մլրդ դրամի հարկ (2022-ին՝ 4,5 մլրդ դրամ), որից շահութահարկը՝ 1,2 մլրդ դրամ (2022-ին՝ 845 մլն դրամ), եկամտային հարկը՝ 714 մլն դրամ (2022-ին՝ 563 մլն դրամ), ԱԱՀ-ն՝ 1,8 մլրդ դրամ (2022-ին՝ 1,5 մլրդ դրամ), ակցիզային հարկը՝ 450 մլն դրամ (2022-ին՝ մոտ 350 մլն դրամ):

Աղյուսակ 2. Ցանկի վերջին հարյուրյակի միջին վիճակագրական հարկատուի վճարած հարկերը, մլն դրամներով

	2018	2019	2020	2021	2022	2023
Ընդամենը	67.0	85.0	79.0	99.0	126.0	177
Շահութահարկ	11.9	19.7	15.4	11.4	14.4	23.4
Եկամտային հարկ	19.1	25.8	25	21.5	29.8	39.4
ԱԱՀ	33	37.1	34.2	51.3	63.1	79
Ակցիզային հհարկ	12.7	2.8	2.8	2.8	2.5	2.4

Վերջին 100-յակի միջին վիճակագրական հարկատուն 2023թ. առաջին վեց ամիսների արդյունքներով վճարել է 177 մլն դրամի հարկ (2022-ին՝ 126 մլն դրամ), շահութահարկը՝ 23,4 մլն դրամ (2022-ին՝ 14,4 մլն դրամ), եկամտային հարկը՝ 39 մլն դրամ (2022-ին՝ 30 մլն դրամ), ԱԱՀ-ն՝ մոտ 80 մլն դրամ (2021-ին՝ 63 մլն դրամ):

Դիտարկվող ժամանակահատվածում նշանակալի կերպով փոխվել է նաև ցանկում ներառված հարկատուների տարածքային բաշխվածությունը: Այսպես, Երևանում գրանցված հարկատուների թիվը ցանկում ներառվածների 79%-ն է, ինչը նախորդ տարիների համեմատությամբ որոշակիորեն նվազել է: Մինչդեռ նրանց մասնաբաժինը վճարած հարկերի ընդհանուր ծավալում 2023-ին կազմել է 81,5%, ինչը 10 տոկոսային կետով բարձր է նախորդ տարիվա մակարդակից (գծապատկեր 9)



Գծապատկեր 9.Երևանի մասնաբաժինը, տոկոսներով

Աղյուսակ 3-ում ներկայացված է 1000 հարկատուների ցանկի վերին հորիզոնականներում տեղ գբաղեցրած մի շարք կազմակերպությունների կողմից

հունվար-հունիս ամիսներին պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր մեծության դինամիկան 2022-2023թթ. ընթացքում: Ընտրված թվով 100 կազմակերպությունների մոտ 85 տոկոսը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ որոշակիորեն ավելացրել են վճարված հարկերի մեծությունը: Այսպես, նախորդ տարվա համեմատությամբ բացարձակ արտահայտությամբ առավել մեծ աճ արձանագրած հարկատուների տասնյակում հինգը ներկայացնում են ֆինանսաբանկային հատվածը: Իսկ ընդհանրապես, ցանկի առաջին հարյուրյակի ընկերությունների շուրջ կեսը նախորդ տարվա համեմատությամբ վճարած հարկերի ծավալը աճել է առնվազն 1 մլրդ դրամով:

Դիտարկվող ընկերությունների շարքում 7 հարկատու նախորդ տարվա առաջին կիսամյակի համեմատությամբ պակաս է վճարել 1 մլրդ և ավելի դրամի չափով հարկ: Այս ցուցիչով ՁՊՄԿ-ից բացի առանձնանում է նաև «Թեղուտ» ընկերությունը, նաև՝ «Գազպրոմ Արմենիա»-ն:

Աղյուսակ 3. 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ընդգրկված առանձին ընկերությունների կողմից հունվար-հունիս ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր մեծությունը, մլրդ դրամներով

Տեղը ցանկում	Կազմակերպության անվանումը	2021	2022	Տարբերությունը
1	«ՁԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆՁԱՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ»	104.8	34.8	-70.0
2	«ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ»	33.1	30.6	-2.5
3	«ԳՐԱՆԴ ՏՈԲԱԿՈ»	20.0	20.2	0.2
4	ԱՄԵՐԻԱԲԱՆԿ	4.8	19.9	15.1
5	ԱՐԴՇԻՆԲԱՆԿ	3.7	18.9	15.2
6	«ՄՈԲԱՅԼ ՍԵՆԹՐ ԱՐԹ»	2.3	15.8	13.5
7	«ՓՐԻԹԻ ՈՒԵՅ»	0.9	15.7	14.8
8	«ՍԻ ՓԻ ԷՍ ԷՆԵՐՋԻ ԳՐՈՒՊ»	6.4	11.3	4.9
9	«ԻՆՏԵՐՆԵՅՇՆԼ ՄԱՍԻՍ ՏԱԲԱԿ»	10.8	11.3	0.5
10	«ՋԵՅ ԹԻ ԱՅ ԱՐՄԵՆԻԱ»	4.6	9.2	4.6
11	ԱԿԲԱ ԲԱՆԿ	4.1	8.9	4.8
12	«ԱՐՄԵՆԻԱ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՆԵՐ	5.5	8.2	2.7
13	«ՄՏՍ ՀԱՅԱՍՏԱՆ»	8.2	8.2	0.0
14	«ՖԻԼԻՊ ՄՈՐՐԻՍ ԱՐՄԵՆԻԱ»	7.5	8.1	0.6
15	«ՍԻԹԻ»	5.4	7.4	2.0
16	ԻՆԵԿՈԲԱՆԿ	3.0	7.4	4.4
17	«ՖԼԵԾ»	7.6	7.2	-0.4
18	«ՅՈՒՔՈՄ»	2.9	6.9	4.0
19	ԷՎՈԿԱԲԱՆԿ	0.8	6.5	5.7
20	«ԱԼԵՔՍ ԷՆԴ ՀՈԼԴԻՆԳ»	6.7	5.7	-1.0
21	«ՍՈՖԹ ԿՈՆՍՏՐԱԿՏ»	5.2	5.7	0.5
22	«ՄԱՔՍ ՕԻԼ»	5.2	5.4	0.2

23	ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ	2.2	5.4	3.2
24	«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ»	4.0	5.3	1.3
25	«ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ»	3.2	5.2	2.0
26	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ»	6.2	5.1	-1.1
27	«ՎԻԷՄ ԱՐՄԵՆԻԱ»		4.9	4.9
28	«ՎԱՅԼԴԲԵՐՐԻԶ»	0.3	4.7	4.4
29	«ՄԵԳԱ ԹՐԵՅԴ»	2.7	4.7	2.0
30	«ՏՈՅՈՏԱ ԵՐԵՎԱՆ»	1.4	4.7	3.3
31	Այդի Բանկ	1.2	4.6	3.4
32	«ԿՈԿԱ-ԿՈԼԱ ՀԵԼԼԵՆԻԿ ԲՈԹԼԻՆԳ ՔԱՄՓՆԻ ԱՐՄԵՆԻԱ»	3.6	4.5	0.9
33	«ԿԱԲԱՐԿՈ»	4.1	4.5	0.4
34	ԱՐԱՐԱՏԲԱՆԿ	1.2	3.9	2.7
35	ԷՅՉ-ԷՍ-ԲԻ-ՍԻ ԲԱՆԿ ՀԱՅԱՍՏԱՆ	1.2	3.9	2.7
36	«ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ»	2.8	3.9	1.1
37	«ԳՐԱՆԴ ՔԵՆԴԻ»	3.0	3.8	0.8
38	«ԱՎԱՆԳԱՐԴ ՄՈԹՈՐՍ»	1.8	3.7	1.9
39	«ԱՎՏՈԲԱՅ»	0.7	3.6	2.9
40	«ՕՆԻՐԱ ՔԼԱԲ»		3.6	3.6
41	«ԴԵԿՈՐԱ-ԳՐՈՒՊ»	2.6	3.5	0.9
42	«ԳՐԱՆԴ ՄԱՍՏԵՐ»	2.4	3.4	1.0
43	«ԱՐԱՐԱՏՑԵՄԵՆՏ»	2.8	3.3	0.5
44	«ԲԱՂՐԱՄՅԱՆ»	3.4	3.3	-0.1
45	«ՅՈՒԷՍԷՅ ԱՎՏՈԷՔՍՊՈՐՏ ԲՍԵ»	1.9	3.2	1.3
46	«ՆՈՐ ՁՈՎՔ»	0.8	3.2	2.4
47	«ԵՐԵՎԱՆԻ ԿՈՆՅԱԿԻ ԳՈՐԾԱՐԱՆ»	2.8	3.2	0.4
48	«ՆԱՏԱԼԻ ՖԱՐՄ»	2.6	3.1	0.5
49	«ԹԵԼ-ՍԵԼ»	1.8	3.0	1.2
50	«ԱՆԴԱԿՈ»	2.1	2.95	0.8
51	«ՍԻՆՈՓՍԻՍ ԱՐՄԵՆԻԱ»	2.2	2.93	0.7
52	«ԴԻՋԻԹԵՅՆ»	2.1	2.91	0.8
53	«ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ «ՏՐԱՆՍԳԱԶ»	3.2	2.88	-0.3
54	«ԱՍԿԵ ԳՐՈՒՊ»	4.4	2.87	-1.5
55	«ԲԱՐՍԻՍ»	2.5	2.76	0.3
56	«ԱԳ ԻՄՊԵՔՍ»	1.5	2.72	1.2
57	«ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ»	2.0	2.69	0.7
58	«ՍԱՍ-ԳՐՈՒՊ»	2.4	2.68	0.3
59	«ԷՊԱՄ ՍԻՍԹԵՄԶ»	1.4	2.67	1.3
60	ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ	1.7	2.58	0.9
61	«ՍԼԱՎ ԳՐՈՒՊ»	2.3	2.57	0.3
62	«ՎԵԳԱ ՈՒՈՐԼԴ»	1.9	2.57	0.7
63	«ՀԱՐԱՎԿՈՎԿԱՍՅԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ»	2.0	2.51	0.5
64	«ԷԴԵԼՎԵՅՍ ԿԱ»		2.50	2.5
65	«ԴԵՐԺԱՎԱ-Ս»	1.7	2.34	0.6
66	«ԻՄԷՔՍ ԳՐՈՒՊ»	2.4	2.33	-0.1
67	«ՄՈԴՈՒՍ ԳՐԱՆՈՒՄ»	2.7	2.31	-0.4

68	«ՍՊՍ ՍԻԳԱՐՈՆ»	1.2	2.31	1.1
69	«ՖԱՍԹ ԲԱՆԿ»	0.5	2.30	1.8
70	ՅՈՒՆԻԲԱՆԿ	1.1	2.23	1.1
71	«ԱԼՖԱ-ՖԱՐՄ ԻՄՊՈՐՏ»	1.9	2.23	0.3
72	«ԿԵՀ ԱՐՄԵՆԻԱ»		2.22	2.2
73	«ԱԹԵՆՔ»	1.7	2.21	0.5
74	«ՖԼԱՅՈՒԱՆ ԱՐՄԵՆԻԱ»	0.5	2.21	1.8
75	«ՖՈՐՎԱՐԴ»	0.7	2.19	1.5
76	ԿՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ	2.0	2.14	0.1
77	«ՊԻԿՍԱՐՏ»	2.1	2.05	0.0
78	«ՋԵՐՄՈՒԿ ԳՐՈՒՊ»	0.7	2.01	1.3
79	«ՔԱՌՄԱՌԿ»	0.6	2.01	1.4
80	«ԱՐՄԲՐՈԿ»		2.01	2.0
81	«ԵՐԵՎԱՆԻ ԳԱՐԵՋՈՒՐ»	1.9	1.95	0.1
82	«ՆԵՎԻՍ»		1.90	1.9
83	«ՑԵՊԵԼԻՆ ԱՐՄԵՆԻԱ»	3.3	1.90	-1.4
84	«ՔԱՐՍ ՄՈԹՈՐՍ»	0.16	1.89	1.7
85	ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ	2.2	1.88	-0.3
86	«ՔՈՆԹՈՒՐԳԼՈԲԱԼ ՀԻԴՐՈ ԿԱՍԿԱԴ»	2.2	1.85	-0.3
87	ԱԳԲԱ ԼԻՉԻՆԳ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱՉՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ	0.9	1.85	1.0
88	«ԱԼԵՔՍ ՏԵՔՍՏԻԼ»	0.4	1.84	1.4
89	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԲԵՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ»	0.2	1.83	1.7
90	«ԱԴԱՄԻՈՒՄ»	1.95	1.83	-0.1
91	ԷՅԷՄՓԻՋԻ ԳՐՈՒՊ	1.2	1.73	0.5
92	«ԱՐԿԱԹ»	1	1.72	0.7
93	«ՉՎԱՐԹՆՈՑ ՀԵՆԴԼԻՆԳ»	1.8	1.69	-0.1
94	«ԷԼՔՈՐ ԴԻՍԹՐԻԲՅՈՒՇՆ»	1.5	1.69	0.2
95	«ՍԵՐՎԻՍԹԱՅԹԱՆ ԱՐԵՎԵԼՔ»	1.0	1.67	0.7
96	«ՄԻԳ ՏԵԽՍՊԱՍԱՐԿՈՒՄ»	1.4	1.67	0.3
97	«ԴԱՏԱԱՐՏ.ԱՄ»	0.9	1.65	0.7
98	«ԷՅՓԻՓԻ»		1.59	1.6
99	«ԷՅ.ԴԻ.ԷՄ. ԴԱՅՄՈՆԴՍ»	0.3	1.58	1.3
100	«ԹԵՂՈՒՏ»	8.9	1.56	-7.3

Ամփոփում

1000 հարկատուների ցանկում ներառված կազմակերպությունների կողմից պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր մեծությունը 2023թ. հունվար-հունիս ամիսների արդյունքներով զգալի ծավալային և կառուցվածքային փոփոխություններ է արձանագրել՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ.

- ✓ 1000 խոշորագույն հարկատուների կողմից պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր մեծությունը կազմել է մոտ 875 մլրդ դրամ, ինչը 21%-ով ավելի է նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից,
- ✓ 10 խոշորագույն հարկատուները պետական բյուջե են վճարել 188 մլրդ դրամ հարկ, ինչը նախորդ տարվա համեմատությամբ պակաս է 28 մլրդ դրամով: Այս փաստը պայմանավորված է ցանկի առաջատար ԶՄՊԿ կողմից 2022-ին աննախադեպ ծավալով հարկային պարտավորությունների կատարմամբ, որը ներառում էր ոչ միայն հաշվետու ժամանակահատվածի, այլ նաև նախորդ ժամանակահատվածներում չվճարված, վերահաշվարկված և 2022-ի առաջին կիսամյակի հաշվարկով շուրջ 105 մլրդ դրամի չափով կատարված հարկային վճարումներով:
- ✓ 100 խոշոր հարկատուների պարագայում 2023-ի առաջին կիսամյակում հարկային վճարումները, նախորդ տարվա համեմատությամբ ավելացել են 25 մլրդ դրամով:
- ✓ 2022-ի համեմատությամբ ավելի քան 40% ավելացում է արձանագրել 1000 խոշորագույն հարկատուների ցանկի վերջնամասում տեղ զբաղեցնող ընկերությունների կողմից վճարված հարկերի մեծությունը: Ցանկի վերջին հարյուրակում գտնվող հարկատուների վճարումները 2023թ. հունվար-հունիս ամիսներին կազմել է 17,7 մլրդ դրամ՝ 2022-ի 12,6 մլրդ դրամի փոխարեն:
- ✓ 1000 հարկատուների ցանկում առաջին և վերջին 100-յակի ընկերությունների կողմից պետական բյուջե վճարված հարկերի մեծության հարաբերակցությունը 2023թ. առաջին կիսամյակի համար կազմել է 28 անգամ, ինչը նախորդ տարվա համեմատությամբ էականորեն ցածր է,
- ✓ 2023թ. Առաջին կիսամյակի արդյունքներով՝
  - 162 ընկերություն վճարել է 1 մլրդ դրամից ավելի հարկեր: 2022-ին այդպիսի հարկատուների թիվը 114 էր, 2021-ին՝ 103, իսկ դրան նախորդող տարիներին՝ էլ ավելի քիչ,

- 318 ընկերության և կազմակերպության հարկային վճարումների գումարը գերազանցել է 500 մլն դրամը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում այդպիսի հարկատուների թիվը 244 էր,
- 1000 խոշոր հարկատուների ցանկում չկան 100 մլն դրամից պակաս հարկ վճարած ընկերություններ (2021-ին այդպիսիք 60-ն էին, 2020-ին՝ 212),
- 276 ընկերության պարագայում շահութահարկի վճարումը գերազանցել է 100 մլն դրամը, նախորդ տարի այդպիսի ընկերությունների թիվը 220 էր, իսկ օրինակ 2018-ին՝ 133:
- 277 հարկատուի վճարած եկամտային հարկի մեծությունը գերազանցել է 100 մլն դրամը, նախորդ տարվա համեմատությամբ այսպիսի հարկատուների թվքանակը ավելացել է 17-ով
- 260 հարկատու գերազանցել է եկամտային հարկի՝ 100 մլն դրամի շեմը (2021-ին՝ 225),
- 1000 հարկատուների վճարած հարկերի ընդհանուր մեծության 38,9%-ը կազմել են ուղղակի հարկերը: Նախորդ տարի այս ցուցանիշը 40.4% էր
- 122 հարկատուի ուղղակի հարկի վճարումները գերազանցել են 500 մլն դրամը: Նախորդ տարի այդպիսի կազմակերպությունների թիվը 89 էր, իսկ 2021-ին՝ 67:
- 100 մլն դրամը գերազանցող չափով ուղղակի հարկեր են վճարել 490 ընկերություններ, 2022-ին հանրապետությունում գործել է 446 այդպիսի կազմակերպություն:

✓ Առաջին 100-յակի միջին վիճակագրական հարկատուն 2023-ի առաջին կիսամսյակում վճարել է 4,9 մլրդ դրամի հարկ (2022-ին՝ 4,5 մլրդ դրամ), որից շահութահարկը՝ 1,2 մլրդ դրամ (2022-ին՝ 845 մլն դրամ), եկամտային հարկը՝ 714 մլն դրամ (2022-ին՝ 563 մլն դրամ), ԱԱՀ-ն՝ 1,8 մլրդ դրամ (2022-ին՝ 1,5 մլրդ դրամ), ակցիզային հարկը՝ 450 մլն դրամ (2022-ին՝ մոտ 350 մլն դրամ):

✓ Վերջին 100-յակի միջին վիճակագրական հարկատուն 2023թ. առաջին վեց ամիսների արդյունքներով վճարել է 177 մլն դրամի հարկ (2022-ին՝ 126 մլն դրամ), շահութահարկը՝ 23,4 մլն դրամ (2022-ին՝ 14,4 մլն դրամ), եկամտային հարկը՝ 39 մլն դրամ (2022-ին՝ 30 մլն դրամ), ԱԱՀ-ն՝ մոտ 80 մլն դրամ (2021-ին՝ 63 մլն դրամ):

✓ Երևանում գրանցված հարկատուների թիվը ցանկում ներառվածների 79%-ն է, ինչը նախորդ տարիների համեմատությամբ որոշակիորեն նվազել է: Մինչդեռ

նրանց մասնաբաժինը վճարած հարկերի ընդհանուր ծավալում 2023-ին կազմել է 81,5%, ինչը 10 տոկոսային կետով բարձր է նախորդ տարվա մակարդակից

- ✓ Առաջին հարյուրյակի հարկատուների մոտ 85 տոկոսը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ որոշակիորեն ավելացրել են վճարված հարկերի մեծությունը:
- ✓ Նախորդ տարվա համեմատությամբ բացարձակ արտահայտությամբ առավել մեծ աճ արձանագրած հարկատուների տասնյակում հինգը ներկայացնում են ֆինանսաբանկային հատվածը:
- ✓ Ցանկի առաջին հարյուրյակի ընկերությունների շուրջ կեսը նախորդ տարվա համեմատությամբ վճարած հարկերի ծավալը աճել է առնվազն 1 մլրդ դրամով: